

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ

Լրացուցիչ կրթական ծառայության պայմանագիր

..... 2020 թ.

Ք. Երևան

Ընդհանուր դրույթներ

Լրացուցիչ կրթական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում են սովորող..... -ը¹ (այսուհետ՝ Սովորող), Սովորողի օրինական ներկայացուցիչ -ը (այսուհետ՝ Երաշխավոր), և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում լրացուցիչ կրթական ծառայություն մատուցող մասնաճյուղի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար) Սովորողին լրացուցիչ կրթական ծառայություն մատուցելու մասին: Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի զարգացման ծրագրով, կանոնադրությամբ:

Պայմանագրի առարկան

- (օրինակ՝ ջութակի ուսուցում) բովանդակությամբ (այսուհետ՝ Բովանդակություն) Ծառայության կազմակերպումն է դասավանդող ղեկավարությամբ (այսուհետ՝ դասավանդող):

Կողմերի պարտականությունները և իրավունքները

Սովորողը պարտավոր է.

- մասնակցել Բովանդակությամբ որոշված պարապմունքներին և չուշանալ.
- պարապմունքի հաճախել անհրաժեշտ գործիքներով, պիտույքներով.
- բացակայելու կամ ուշանալու դեպքում տեղեկացնել դասավանդողին.
- ունենալ և վարել ուսումնական բլոգ.
- վարել էլեկտրոնային հասցե, պատասխանել Դասավանդողի, Ղեկավարի էլեկտրոնային նամակներին.

¹ Մեծահասակ սովորողի դեպքում օրինական ներկայացուցչին վերաբերող հատվածները հանել, մինչև 5-րդ դասարանցու դեպքում «սովորող-ը (այսուհետ՝ Սովորող),»-ի փոխարեն «սովորող-ի (այսուհետ՝ Սովորող)»:

- մասնակցել կրթահամալիրի, լրացուցիչ կրթության կենտրոնի ուսումնական օրացուցով որոշված տոներին, ստուգատեսներին, այլ նախագծերի.
- անձամբ կամ օրինական ներկայացուցչի միջոցով պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում կատարել պայմանագրով որոշված վճարումները.
- մասնակցել պարապմունքի համար նախատեսված տարածքի խնամքի, ինքնասպասարկման աշխատանքին
- մասնակցել հիգիենիկ պահանջների պահպանմանը, ուսումնական տարածքների և գույքի խնամքին
- Պահպանել կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնները:

Օրինական ներկայացուցիչը երաշխավորում է Սովորողի կողմից պարտավորությունների կատարումը:

Սովորողն իրավունք ունի.

- անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով մասնակցել Բովանդակության մշակմանը, դրանում փոխոխություններ անելուն.
- փոխելու Դասավանդողին:

Դասավանդողը պարտավոր է.

- սահմանված կարգով մշակել և իր բլոգում հրապարակել լրացուցիչ կրթության դասընթացի (գործունեության) ծրագիրը.
- ուսուցումը կազմակերպել սահմանված կարգով վարվող իր ուսումնական բլոգով (ուսումնական բլոգի՝ լրացուցիչ կրթության բաժնով).
- ուսուցումը կազմակերպել կրթահամալիրի, դպրոցի, լրացուցիչ կրթության ուսումնական օրացույցով.
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել.
- կրթահամալիրում սահմանված կարգով կատարել սովորողի մասնակցության հաշվառում.

- ծրագրի արդյունքները հանրայնացնել ուսումնական օրացույցով որոշված ստուգատեսով, այդ թվում՝ ցուցադրություն, ցուցադրական ելույթ, համերգ, ընկերական հանդիպում, այլ) սովորողի գործունեության մասին.
- պարապմունքի համար նախատեսված տարածքը ընդունել և հանձնել մաքուր, պատասխանատու լինել տարածքում գույքի, սարքավորումների վիճակի համար:

Ղեկավարը պարտավոր է.

- Ծրագրի իրականացման համար տրամադրել անհրաժեշտ տարածք, գույք
- վերահսկողություն իրականացնել ծառայության իրականացման նկատմամբ:

Սովորողի, Դասավանդողի, Օրինական ներկայացուցչի, Ղեկավարի այլ իրավունքները և պարտականությունները որոշվում են կրթահամալիրի ներքին կարգապահական կանոններով:

Պայմանագրի գինը

1. Ստացած Ծառայության համար Սովորողը (Օրինական ներկայացուցիչը) պարտավորվում է կրթահամալիրի հաշվարկային հաշվեհամարին փոխանցումով վճարել ուսումնական վճարը:
2. Սովորողը վճարումները կատարում է ամսական՝ մինչև ընթացիկ ամսվա 5-ը: Բանկային հաշվի համար՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900018003203:

Այլ պայմաններ

1. Ամսվա որևէ օրվանից սկսվող ծառայության դեպքում Սովորողը վճարում է ամբողջ ամսվա համար:
2. Սովորողի՝ որևէ պատճառով բացակայությունը չվճարելու հիմք չէ: Բաց թողնված պարապմունքները լրացվում են կրթահամալիրում սահմանված կարգով:
3. Որևէ հիմքով պայմանագիրը լուծելու դեպքում արդեն մուծված գումարը չի վերադարձվում:
4. Լրացուցիչ կրթության կազմակերպման հասցե՝

Պայմանագիրը սահմանված կարգով կարող է լուծվել ժամկետից շուտ.

1. Սովորողի (Օրինական ներկայացուցչի) նախաձեռնությամբ:
2. Դասավանդողի միջնորդությամբ կամ Ղեկավարի նախաձեռնությամբ՝ երբ Սովորողը (Օրինական ներկայացուցիչը) չի կատարում պայմանագրով որոշված պարտականությունները:

Պայմանագրի գործողության ժամկետը

1. Պայմանագիրը գործում է-ից:
2. Պայմանագիրը գործում է մինչև 2021թ. հունիսի 30-ը:

Կողմերը

Սովորող՝

Անուն՝

Ազգանուն՝

Էլ. հասցե՝

Հեռախոս՝

Ստորագրություն՝

Լրացուցիչ կրթության կենտրոնի

ղեկավար՝

Անուն՝

Ազգանուն՝

Էլ. հասցե՝

Հեռախոս

Ստորագրություն

Օրինական ներկայացուցիչ՝

Անուն՝

Ազգանուն՝

Էլ. հասցե՝

Հեռախոս՝

Անձնագիր

Ստորագրություն՝

Դասավանդող՝

Անուն՝

Ազգանուն՝

Էլ. հասցե՝

Հեռախոս՝

Ստորագրություն՝